

Պիեթայի բովանդակած մտքերը համակրելի են, դուք է և մեր հասարակութեան մասամբ ոչ անսովոր: Սակայն Գիւղը-Մօպասանի այդ գրութեանը բնական տեսակետից վերին աստիճանի տաղանդով է անվերջանալի դատողութիւններ, առանց գործողութեան մէջ, կարելի էր ասել նոյն իսկ մի գործողութեան մէջ: Ուստի և ներկայացումը ձանձրացնող տպաւորութիւն թողեց փոքրամիտ հասարակութեան վրա: Գլխաւոր դերակատարները՝ տիկին Մէլիքեան, մահամբձ կնոջ դերում, սպասածից էլ լաւ էր, իսկ օրիորդ Ախաշեան իր դերը թող անցկացրեց: Պ. Պետրոսեան այնքան էլ աղոյշ չէր իր պատմախոսական դերում, իսկ պ. Արեւելեանի խաղի տպաւորութեանը վնասում էին նրա մի քանի ոչ պարզեղան մանկները: Պ. Տէր-Գալսեօսեան կըրկին խորհուրդ ենք տալիս չը վերցնել իրան անյարմար դերեր: Տիկին Զարեկ և պ. Զարուիւնեան չը փչացրին իրանց դերերը: Երկրորդական դերեր կատարողները, ինչպէս ասում են, «եօլա տարան»:

«Արջ» փոքրիկը լաւ անցաւ՝ չորսուրդ պ. Պետրոսեանի և Տէր-Գալսեօսեանի աղոյշ խաղի: «Շուրիկ» պիւեան թարգմանված է թիթիւ լեզուով: «Արջի» թարգմանիչը աշխատել է փոխադրել փոքրիկը, բայց այնքան էլ չէ աղոյշվել: Մի քանի տեղ թարգմանիչը նոյն իսկ անհրեղիս սխալներ է արել: Օրինակ. «Я его обожала, какъ идола» թարգմանել է՝ «Ես նրան պաշտում էի, ինչպէս նեխմանութիւն»:

ՆԱՍՏԱԿ ՂԱԶԱՆԻՅ

Նոյեմբերի 13-ին

Ամսիս 10-ին յայտնի առաջակայան Գեարամի եղբայր Համիդ սպանեց հրապանով Ղազանի գաւառի պրիստա թուրք Հասան-բեգին, Գեասաւան դիւրում: Սպանութեան մանրամասնութիւնն այս է: Գեարամի երկու եղբայրները՝ Համիդ և Մէլիք, մի քանի անգամ կոչված են լինում դատարան, բայց նրանք ընդդիմութեամբ բաց են ասել և միշտ խոյս տուել բռնակցուց: Ամսիս 9-ին Հասան-բեգը «մի կկուլ» բերել է տալիս Համիդին իր մօտ Գեասաւան գիւղը: Երբ Համիդ մտնում է սրբիստաւի սենեակը տեղի տանուէրի հետ, ողջունում են միմեանց: Ապա պրիստաւը հարցնում է թէ «ինչու չես գալի, երբ քեզ իշխանութիւնը կանչում է»: Համիդն ասում է թէ «ես իշխանութիւն չեմ ձանաչում, և ոչինչ գործ չունեմ իշխանութեան հետ»: Երբ պրիստաւը սկսում է սաստիկ յանդիմանել Համիդին, ինքն փոխադարձ պատասխան է տալով: Պրիստաւը զայրացած հանում է թուրք խիկուտ. այդ ժամանակ Համիդը ուղղում է հրացանը պրիստաւի վրա և տեղի ու տեղը սպանում նրան: Գեա չունչը վրան մեռնողը հրամայում է մօտը գտնված տանուէրին կալա-նաւորել սպանողին, այդ ժամանակ Համիդի ձայնի վրա դուրսը պատրաստ կանգնած նրա եղբայրը՝ Ղազանը հանած ներս է մտնում և տանուէրի ուսին խփում, որը թողնում է Համիդին և պաշտպանվում: Համիդը և եղբայրն անմիջապէս անհրկուցում են:

Ասում են մեծ կարողութիւն ունէր Հասան-բեգը: Նա անդաւակ էր և լավում է որ կտակ Մի պարսն, որը շարաթը մի անգամ «Վրացիների մէջ» վերնագրով մի մի ֆէլիտուն է գետեղում «Իվերիայում», անում է այսպիսի մի աշոյղ սրամտութիւն:

«Այսօր ես ուղում եմ խօսել թիֆլիսի մասին, բայց թիֆլիսի մասին արած խօսակցութեանը աւելի կը յարմարէր «Օտարների մէջ» վերնագիրը, որովհետեւ վրաց մասը Վրաստանի բուն մայրաքաղաքում այն աստիճան հալվել է ու ջուր կտրվել, որ ամենին «իդն ու թողը» չէ երեւում: Հաղարից մի անգամ միայն Միխէյլ Մաչաբելու (դուստրի ձայնաւոր) սպառնալի ձայնը յիշեցնում է, որ վրացիք, որոնք ոչինչ չեն չինում և ոչ մի տեղ չեն երևում, դուք ընդունակ են խօսելու, ապա թէ ոչ մեր երբեմն մայրաքաղաք եղած թիֆլիսում վրացութեան ուրիշ ոչ մի նշան չէինք ունենայ: Այո, շատ աշխատեցի որ յօդուածիս տամ «Օտարների մէջ» վերնագիրը, բայց մեր խմբագիրը սաստիկ ցնցեց ու զայրացած ինձ ասեց. «Ինչպէս թէ յօդուածդ չի յարմարի «Վրացիների մէջ» կոչվելու. միթէ մենք այն անտիճան ընկանք, որ մեր մայրաքաղաքն էլ

ունի թողած: Նա շատ բարեհոգի և ազնիւ մարդ էր: Նրա դիակը, գաւառացիների կարգադրութեամբ, տեղափոխվում է Շուշի, իր հայրենիքը:

Գաւառացիները ղինուորներով դնաց յիշեալ գիւղը, բայց մինչև օրս առաջակները հեռքը չէ երեւում:

Ասում են որ երաշխաւորութեամբ էին շրջում Գեարամի եղբայրները: Այդ անցքը սարսափ է ազդել ժողովրդի վրա. վախենում են Գեարամի օրերը չը պատահեն:

Գիւղացի

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, նոյեմբերի 19-ին

Թարգմանութեան «Մշակ» լրագրի խմբում եմ յայտնել, որ գործակատարների փոխադարձ վարկի և Օգնութեան ընկերութեան կանոնադրի քըն-նութիւնը ընդհանուր ժողովով տեղի է ունենալու առաջիկայ կիրակի օր, ներկայ նոյեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, «Музыкальный Кругъ»-ի բնակարանում, նախկին տուն Արշակունի:

Համաձայն նախընթաց ընդհանուր ժողովի որոշման՝ դալ ընդհանուր ժողովին մասնակցել ցանկացողը պէտք է վճարէ 1 ռուբլի, սկզբնական ծախսերը հայթայթելու համար, որից ազատ են նրանք, որոնք արդէն մի անգամ ստորագրվել են նախընթաց ընդհանուր ժողովում: Վճարը կարող է կատարվել նաև ընդհանուր ժողովի օրը, նիստը սկսելուց առաջ:

Կանոնադրութեան ծրագրերը կազմող յանձնա-ժողովի նախագահ Ա. Արասխանեանց.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Զաքարյալ, 12 նոյեմբերի

Ի դիմաց Զաքարյալի հայոց ուսումնարանի հոգաբարձութեան պատիւ ունեմ հրապարակութիւն չորսակալութիւն յայտնել զանձակեցի պ. Աւետիս Օհանեանցին, որն ասա տասը տարի շարունակ տարէնը 50 ռուբլի է նուիրում մեր ուսումնարանին, խոստանալով այդ նուիրարեութիւնը շարունակել մինչ իր կենսի վերջը: Մի և նոյն ժամանակ պարտաւորեցնում է իր ժառանգներին, որ այդ նուիրարեութիւնը շարունակվի, մինչև որ Զաքարյալայում որ և է կաք կունենան: Նոյնպէս չորսակալութիւն ենք յայտնում տեղիս զեպուտատներին, պ. Գրիգոր Ստեփանեանցին և Մնացական Ուսանեանցին, և հարկաւորով պ. Փանոս Խանյուկեանցին, որոնցից առաջինները վեց տարի, իսկ վերջինը երեք տարի շարունակ նոյնպէս նուիրում են ուսումնարանին տարէնը 25 ռուբլի:

Զաքարյալի հայոց ուսումնարանի հոգաբարձու Աւետ Աւետեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի Զգրաչն եկեղեցու ծխականներից մէկը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Զեր լրագրի անցեալ համարում խօսելով մեր եկեղեցու երեցօրիկի ընտրութեան մասին, դարձանք էք յայտնում որ երեցօրիկ ընտրվել է օտար ծուխին

օտարներին մէջ դնենք: Ի՞նչ էք գովել.—թէ որ բան չենք չինում.—հէց դրանով ապացուցանում ենք մեր վրացութիւնը: Բան չենք չինում նրա համար, որ մենք բարեծիտնք ենք, մեր երակները մէջ ազնիւ ու պայծառ արեւն է վազում. միթէ լայն է մեզ գործ չինելը: Բայց դրա փոխարէն մենք ունենք խօսելու լաւ ակործակ և խօսում ենք պէտք եղածից էլ աւելի»:

Վերջին ժամանակներս վրաց լրագրում շատ յաճախ են պատահում այնպիսի յօդուածներ, որոնք խիստ և անաչառ կերպով քննադատում են վրաց հասարակութեան ինչ-ինչ պատկանութիւնները և շատ անգամ մինչև ծայրահեղութեան հասնում: Գրում են այդ մասին ոչ միայն ֆէլիտուններ ու թղթակցութիւններ, այլ և առաջ նորագործներ: Նմանի համար դենք այստեղ մի ընդհանրական բանասիրական հետեւալ կտորը:

«Վեր հասկացողութիւնն ու վարքը և բարքը չեն թող տալիս մեզ համեմու այն ազնիւ կենցաղավարութեան ծարաւին, որ դուք են բոլոր լուսաւորված հասարակութիւնները: Մենք կը

պատկանող մի անձն և հարցնում էք՝ միթէ նախադաճող քաճանան չը գիտէր օրէնքը, որի դուրսեւոր երեցօրիկ պիտի ընտրվի եկեղեցու ծխականներից: Կարող ենք ձեզ հաւատացնել, որ տեր-հայրը շատ լաւ գիտէ այդ օրէնքը, բայց նա նմանապէս գիտէ և այն, որ նախկին թեմական առաջնորդի հրահանգում ասված է, որ եթէ ծուխի մէջ չէ գտնվում արժանաւոր անձ, կարելի է ընտրել և օտար ծուխին պատկանող մի անձնաւորութիւն: Սակայն նախադաճող քաճանան ի՞նչ անէ, երբ իրանք ծխականները իրանց ծուխի միջից առաջարկված արժանաւոր անձին մի 10 հատ քուէ պակաս են տալիս, քան օտար ծխականին: Եւ իրաւ, առաջնորդի հրահանգը վերաբերում է այնպիսի եկեղեցիներին, որոնք ծխականների մեծ մասը ստորին ժողովրդին պատկանող, անյայտ և անգրագէտ մարդիկ են, իսկ Զգրաչն եկեղեցու ծուխը շատ հարուստ է, ունի բազմաթիւ ինտելիգենտ մարդիկ, որոնց մասին չէ կարելի ասել, թէ անարժան են երեցօրիկի պաշտօնի համար ընտրվելու: Տէր-հայրը մեղաւոր չէ, եթէ ինքն ծուխը՝ կամ իր պարտաւորութիւնները չէ ձանաչում, կամ անփութ է վերաբերվում դէպի իր այդ պարտաւորութիւնները»:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Խրմալեանցից, նրա նոր երաժշտական հեղինակութիւնը, մի «Nocturne» պիւեսի համար: Գրութեանը բաւական չորսակ է և իր ընդհանուր շինուածքով յիշեցնում է Մէլիքեանի «Lieder ohne Worte» փոքրիկ պիւեսների ոճը: Զախ ձեռքի մասը (պատիւան), այսինքն ակօմպանիմենտը, մեր հեղինակը, չը գիտենք ինչի համար, ջանացել է որքան հնար է բարդ դարձնել, համեմատելով կօնցէպ-ցիայով աղքատ՝ աջ ձեռքի պարտիայի հետ, որի բուն եղանակը (մտաւիճ), առանձին վերցրած՝ մարի կողմից ձուլ չը լինելով, սաստիկ յիշեցնում է մի ինչ որ շատ ծանօթ ուսուցչի բռնաւ: Թէ և ընդհանրապէս չորսակի, ածելու համար էլ ոչ դժուար, լսելու համար դուրեկան այդ սալօնական երաժշտական գրութեանը՝ դուրի է, սակայն, մի որ և է ինքնուրոյն, նոր երաժշտական գաղափարից: Տեղադրել գինը 60 կօպէկ է: Ծախվում է Թիֆլիսում, Մերթմանեանի երաժշտական մաքաղ-նում:

«Արեւել» լրագրի հոկտեմբերի 29-ի թուում կարդում ենք. «Բերայի քաղաքի Գեւ. Գարեգին Կալիկապոս Սրուանձտեանց, որ ժամանակէ մը թի՛ «Շուրիկ» և առաջիկայ երկուշաբթի՛ «Շէյ-հետէ տկար էր և օգտփոխութեան համար կղզի գտնուէր, ապաքինած չըլլալով, երէկ Աղգային Հիւանդանոց դնաց, ուր պիտի մնայ դարձանուելու համար»:

Ստացանք մի փոքրիկ գրքից, «Երկու եղբայր» վերնագրով, աշխատութիւն Շիրակեցու: Դա իրական կենսիցի վերցրած մի պատկեր է: Գինը 8 կօպէկ է:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են. «Նոյեմբերի 14-ին, երեկոյան, հայոց ուսումնարանի դաճիճում Բաթործական ընկերութեան այստեղի ձուլի ընդհանուր ժողով էր կայացել: Ներկայ էին 35 անդամներ և 15 հոգի էլ ուղարկել էին իրանց գրաւոր ձայները: Նախահալը հաստատվելուց յետո՛

համաձայնեցին հովանաւորել ամեն տեսակ ընկերութիւն, միայն թէ այս վերջինը հեռու լինել որ և է բարի գործ կատարելու դիտումից: Օրինակ. կարող էք հիմնել «Բեֆ» անդների ընկերութիւն», «աւաղակները և յափշտակիչների ընկերութիւն», «բամբասաւենների ընկերութիւն» և այլն: Այդ տեսակ ընկերութիւնները կարող են շատ շուտով արմատ գցել մեր մէջ, առաջ գնալ փորձեցէք հիմնելու. մի այնպիսի ընկերութիւն, որը նպատակ ունենայ որ և է օգուտ տալ հասարակութեան և կը տեսնէք, որ հէց ձեր ընկերները առաջինը կը ծաղրեն ձեր միտքը և կաշխատեն խանդալուելու նրա իրադրութեամբ, թէպէտ դա լինի մի անհրաժեշտ գլուխ բերելու բան ա՛մեն մի ժողովրդի համար»:

«Մշակի» ընթերցողներին մեր գրութեանից արդէն յայտնի է, որ վրացիների չաջողից տեղափոխել Գանձակից իրանց նշանաւոր բանաստեղծ Ն. Բարաթշաւիլու մարմինը, նրա գերեզմանը կորած լինելու պատճառով: Այդ

տղ, երբ հերթը գալիս է վարչութեան երկու անդամների ընտրութեան հարցին, ժողովականները մէկը հարցնում է՝ արդե՞ք իրաւունք ունի բացակայ անդամը գրաւոր կերպով քուէ տալ: Նախագահը կարդում է կանօնադրութեան այն կէտը, որի մէջ ասված է թէ «քուէ տալիս են անձամբ ներկայ եղողները»: Սկսվում է ահագին վիճարարութիւն, ապա միմեանց անձնականութեան գիւղելը, իրար վիրաւորելը, բղաւոց և աղմուկ: Սկսում են քուէարկել վարչութեան երկու անդամներին և քուէարկութեան հետեանքը երկու անգամ անորոշ է լինում: Գուէարկվողները համ հրաժարվում են, համ նորից քուէարկվում, և այլն: Վերջապէս գրեթէ միաձայնութեամբ ընտրվում են պ. Գ. Խարազեանց և Խօջամիւրեանց: Նիստը վերջանում է 11½ ժամին գիշերվա՛յ»:

ԲԱՐԿԱՆՍԱՐԱՅ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղի տանուէրը արժանի է շնորհակալութեան, քանի որ նա միշտ հոգում է գիւղի հայոց ծխական ուսումնարանի մասին: Այժմ մեր ուսումնարանի աշակերտների թիւը 50-ի է հասնում: Ուրիշ կողմից հրաւիրում ենք պ. տանուէրի լուրջ ուշադրութիւնը գիւղիս մարդկութեան վրա, քանի որ եկող դարանս խօլեբան նորից կարող է կրկնվել»:

ՕՐԻՍՏԱՅ մեզ գրում են. «Յրտերը սկսվեցան արդէն. ձիւնը գալիս է քանի մի օր շարունակ»:

ՐՈՍՏՈՎ (Գոնի վրա) քաղաքից մեզ գրում են, որ այդտեղ, նոյեմբերի 11-ին առաջին անգամ ձիւն է եկել: Բոստօլի շրջակայները ծածկված են արդէն ձիւնի սպիտակ սառանով: Սակայն Գոնի գետը դեռ ևս չէ սառել և նաւաղացութիւնը այդ գետի վրա դեռ շարունակվում է:

Մեզ գրում են ՐՈՍՏՈՎԻՅ հետեւեալը. «Շուտով կը սկսեն վաճառվել հանգուցեալ հայ բանաստեղծ Բաթործական Գառնիկեանի կիսարձանները (բիւստերը), հատը 6 ռուբլիով: Հանապարհանք, օտար քաղաքներ ուղարկելու համար, ինչպէս իմացանք, բանաստեղծի որբերի խնամա-կալները իրանք են յանձն առնում»:

Հայոց թատրոնի ղեկավարները այս մի շարաթվայ ընթացքում երեք ներկայացում նշանակեցին՝ երկուշաբթի օր՝ «Սխալ հաշիւ», հինգշաբթի օր՝ «Շուրիկ» և առաջիկայ երկուշաբթի՛ «Շէյ-հետէ տկար էր և օգտփոխութեան համար կղզի գտնուէր, ապաքինած չըլլալով, երէկ Աղգային Հիւանդանոց դնաց, ուր պիտի մնայ դարձանուելու համար»:

«Արձագանքը» իր № 134-ի մէջ տպագրել է Ներսիսեան դպրոցի աշակերտների ձանապարհօր-դութեան հաշիւը: Ուրախ ենք: Հէց այդ էր մեր ցանկութիւնը: Սակայն հաշիւ մէջ մի բան միայն մոռացված է, այն է ձանապարհօրդութեան ղեկավարող ուսուցիչ Ի. Զարուիւնեանին տուած ամսական 75 ռուբլին, որ երեք ամսում կանէ 225 ռուբլի, և որը աւելացնելով հաշիւ մէջ ցրաց

գործը ստացաւ հիմա ուրիշ կերպարանք: Մի ծերունի քաճանայ, Միխէյլ Մձինարաւիլի անու-նով, «Իվերիային» ուղղեց Գանձակից մի նամակ, որի մէջ պատմում էր թէ 1867 թվին, երբ ինքը նոր էր գնացել այդ քաղաքը՝ պաշտօնով, եկաւ նրա մօտ հանգուցեալ բանաստեղծի քոյրը և խնդրեց, որ իր եղբոր գերեզմանը օրհնէ: Քաճա-նան շատ լաւ յիշում է այն տեղը, որը դեռ այն ժամանակն էլ գերեզմանադար չէ ունեցել: Նա աւելացնում էր, թէ Գանձակում կան նաև ուրիշ ծերունիներ, որոնք նոյնպէս լաւ գիտեն կորած գե-րեզմանի տեղը:

Հանգուցեալի աղաքանները ձանապարհ ըն-կան դէպի Գանձակ, տեսան այդ գիւղը և արդէն խնդրի են տուել կուկաւի պ. կառավարչապետին, որ թող արլի իրանց՝ գիւղի թիֆլիս բերելու: Լուսն ենք նոյնպէս, որ միտք կայ Ն. Բարա-թշաւիլու, ոսկրները ամբողջի ոչ թէ Մթածմին-գայի վանքում, այլ մեր քաղաքի՝ Քաշվիթ եկեղե-ցու բակում:

Տ. Փիլոսոփանց

տուած 1320 թ. 93 կօպէկին, կանի 1345 թ. 93 կօպէկէ: Ուրեմն ճիշդ էր մեր ստածը, թէ ճանապարհորդութեան վրա ծախսուել է մօտ 1,600 բոլորի, որ «Արձագանքը» իր նախորդ առաջնորդութեամբ փորձել էր հնարել: Ի դէպ, իր այդ նոյն առաջնորդութեամբ, որի զորով ականջները լաւ հրեւում են, թէ յօդուածը անստորագրել է, «Արձագանքը» աշխատում է ցոյց տալ այն մեծ մասնակցութեամբ, որ անհրաժեշտ էր նախապայմանական և նոյն իսկ հոգեբանական նշանակութիւնը, որ ունեցել է այդ ճանապարհորդութիւնը, մասնաւոր Վիլհիմընսըն և իր ժամանակ: Առ այս մենք լուրս ենք, և այդ մանկավարժական-դաստիարակական նշանակութեան մասին կը խօսենք մի ուրիշ ժամանակ:

Ուստի գրող Վլէր Ուսպենսկի առողջանում է, և յոյս կայ որ շուտով նա կարող կը լինի նորից սկսել իր գրական աշխատանքը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻՑ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայէպի թիւրքերէն պաշտօնական լրագրէր հրատարակել է, և Կ. Պօլսի լրագրիւններն էլ նրանից արտատպել են հետեւեալ լուրը. «Զէյթունի տեղական կառավարութիւնն իմանալով որ Տէր-Ներսէսեան Գարութիւն անուն հռչակագոր առաջարկած էր և 4 տարիէ ի վեր փախտական կը թափառէր, իւր տան մէջ կը գտնուէր այժմ. Զէյթունի ոստիկան-գնդապետները գումարտակին հրամանատար, հայազգի Նազարէթը զրկել է այնուհետ, ոստիկան զինուորներէն հայազգի Նշանի ու Մանուկի ընկերակցութեամբ: Երբ աղոնք կը կոխեն Գարութիւնի տունը, Գարութիւն հրացանի մի հարուածով կը սպաննէ Մանուկը. այսու աւանդաբար Գարութիւն և իւր եղբայր Յովհաննէս ողջ ձերբակալուելով յանձնուած են կառավարութեան»:

ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՍԻԹՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Կ. Պօլսի «Հայրենիք» լրագրից քաղուած ենք հետեւեալ յօդուածը. «Երէկ վերջին վարկինն ծանուցնելով Տ. Խորեն Նար-Բէյ արքեպիսկոպոսի մահը: Սրբազանը առողջ էր մինչև չորեքշաբթի իրիկուն: Գիշերը, իր քրոջ տիկին Աննա Մարտիանի տան մէջ, ի Բանկալի, ուր փոխադրուած էր վերջին ատեններս իր բնակութիւնը, Տ. Խորեն արքեպիսկոպոս յանկարծական անհանգստութիւն մը կուռնայ, այլ ըմբռնական օգնութիւն չի հասած՝ հոգին կաւանդէ՝ սրտի կաթնուածէ մը: Բազմաթիւ բժիշկներ, որոց լուր տրվելով փութացած եկած էին, ուրիշ բան չեն ունենար ընելիք, բայց եթէ մահը հաստատուէ: Ենչնայնապէս մարմինը, զոր չորեքշաբթի գիշեր իսկ Բերայի ս. Ներսիսէի խնայելով փոխադրել կը մտաբերէին, երէկ իրիկուն միայն՝ ժամը կէսին՝ փոխադրվեցաւ անդ, նորադոյն կարգադրութեան մը համաձայն: Երէկ ցորեկ, պատրիարքարանի փոխանորդ հայրն, ընկերակցութեամբ պատրիարքարանի Մարգարիտարի գիւղանին տեսուչ Հովնան Ղազար էֆէնտի, ի Բերա հանգուցեալին բնակարանը գաղին՝ անոր գոյքերը, արքեպիսկոպոսի խնայելով կրկնելով, յօդուած Տ. Խորեն արքեպիսկոպոսի բնակարանը, յօդուած Տ. Խորեն արքեպիսկոպոսի գործողութեան մը, որ հետեւաբար չը կատարվեցաւ»:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՍՐՈՒՆԱՅՏԵՍՆԻ ՀԻՄՆՆԵՐԸ

«Հայրենիք» լրագրում կարդում ենք հետեւեալը. «Տ. Գարեգին եպիսկոպոս Սրբանշուտեանցի վիճակը՝ մեծ մտաւատնչութիւն կը պատճառէ: Սրբազանը կը տառապի աղիքներու բորբոքումէ: Երէկ գիտցնել տեսնելու սրբազանը՝ հիւանդանոցի հին չէնթին մէջ: Հիւանդութիւնը կերպարանափոխ ըլլած է առողջ ու կորովի եկեղեցականը, և զեմքին վրա դրած է իր աւերիչ դրօշմը: Հէգ հիւանդը հազիւ կը ճանչնայ իրեն մօտեցողները: Շարքի իրիկուն ծանր տագնապ մի անցուցած էր, և հիւանդանոցի բժիշկները հարկ համարած էին կէս օրայի չափ արւեստ առնել հիւանդին, որ զիշրվան ութին հազիւ կրցած էր սթափիլ: Սրբազանը, իր այս ծանր վիճակին մէջ, միշտ հե-

տաքըրութեամբ կուգէ հետեւի օրուան դէպքերուն և ամին օր օրաթերթ կը փնտռէ: Տ. Խորեն Նար-Բէյի մահը ստատկապէս յուզած է զինքը և յորդառատ արցունք թափած է: Հիւանդանոցի հոգաբարձութիւնն, որ գրեթէ ամեն օր կայցելէ հիւանդին, ամեն պատուէր տուած է հիւանդանոցի պաշտօնէութեան որ ոչ մէկ խնամք խնայուի սրբազանին: «Երէկ, տ. Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննիսեան, տ. Տրդատ վարդապետ Պալեան և քաղմաթիւ բարեկամներ հիւանդանոց գացին: Սրբազանին միակ աղգականը Պօլսի մէջ, իր եղբորդին, Գարութիւն էֆէնտի Սրբանշուտեանց, կը հսկէ անոր անարին մօտ: Տր. Փէշտիմալեան փաշա և Տր. Խորասանեան էֆէնտի այսօր հիւանդանոց կերթան, զննելու հիւանդին վիճակը»:

ԽՈՒՆԻՐԱՆ ԹԻՒՌԻՒՄՈՒՄ

Խօսիւրայի մասին թիւրքաց պաշտօնական աղբիւրները հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում նոյեմբերի 4-ից. (ն. ա.). «Տրապիզոնի մէջ քաղաքի 6 դէպք պատահեցին, կարինի մէջ 2, Բաբերդ 2, Խնուսի Բարմադ-սըզ գիւղին մէջ 2 և Կերշանի վանիկ գիւղին մէջ 2: «Կիրասուն և Օրտու գաւառակներն ալ վարակուած համարելով, Օրտու և Սերաստիայի սահմանագիծին վրա քարանձին հաստատուած է. Սամսունի գաւառը մարտը նկատուելով, Օրտուէն և Կիրասունէն ցամաքի ճամբով եկողներին, նոյն պէս ալ Սերաստիայի և Գասթէմունի կողմերէն եկողներին պիտի արգիլուի Սամսունի գաւառը մտնել»:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 20 նոյեմբերի
Յայտնի է, որ հիշանքը եւրօպական բոլոր աղբիւրի մէջ առված են: Թէ արդար և թէ անարդար կիրպով այլ և այլ յանցանքներ զնում են այդ ժողովրդի վրա, հաւատացնելով որ նա մի փնտաղար տարր է եղել մարդկութեան համար և է: Նոյն իսկ այն քրիստոնեայ ժողովուրդներն մօտ, որոնք իրանց ամբողջ պատմութեան մէջ հրէաների հետ ոչ մի անգամ չեն շփուած, միայն հրէայ անունը նշանակում է ամենայն դադարաւան անպիտանութիւն: Եւ այդ շատ հասկանալի է. Ջրմուռնադ քրիստոնեան, թէ լցված աւետարանական սիրով դէպի իր դրացին, բայց և այնպէս մարդկային բնաւորութեամբ չէր կարող հանգիստ աշուղտ նայել իր փրկիչ չարաշուղին. բնականաբար նա իր սէրը դէպի փրկիչը պիտի արտայայտէր խորին ատելութեամբ և նոյն իսկ վրէժխնդրութեամբ: Դէպի հրէան: Եւ իրաւ, ուր կարողացել է, քրիստոնեան կատարել է այդ վրէժխնդրութիւնը. միջին դարերը, ուր ժողովուրդը ապրում էր միայն կրօնական եռանդով, ապացուցանում են այդ՝ այն դարերից: Հալածանքներով, որոնք կատարուած էին հրէաների դէմ: Եթէ հետեւեալ պատմութեանը սկսած այն օրից, երբ հրէան առաջին անգամ յայտնվում է Եւրօպայում, կը տեսնենք որ նա եղել է անընդհատ հալածումների ենթարկված, և այժման հալածումները ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն առաջինների չարաշուղիները. սակայն երեւոյթը մնալով մի և նոյնը, փոխվում են նրա չարածառիկները և եղանակը, համապատասխան ժամանակի ոգուն և դադափարներին: Եթէ այժման քրիստոնեան բացատրում է իր հալածումները նրանով, որ հրէան մի անգամ ընդհանրապէս է, որը իր ձեռքում ունենալով մի այնպիսի դէպք, որպիսին է կապիտալը, ինքը փախչելով աշխատանքից, ծծում է քրիստոնեայ աշխատող դասակարգի արեւուն, միջնադարեան քրիստոնեան, որը դադափար չուներ ոչ կապիտալի և ոչ աշխատանքի մասին, գոնէ այժման նշանակութեամբ, նա էլ գիտէր իր հալածումները արդարացիել իր հակադրութեան համեմատ պատճառներով. օրինակ, եթէ երկրի մէջ խօշոր էր պատահում, որից շատերը կոտորուած էին, զրա մէջ մնողները էին հրէաներ, իրը թէ սրանք աղբիւրներ ջրերը թունաւորել են, քրիստոնեաներին փշաղենու համար, և ներքին և երաւում էին զարհուրելի կոտորածներ հրէաների դէմ: Ինչքան տարբեր են չարածառիկները, սակայն երեւոյթը մնալով ամեն ժամանակ մի և նոյնը, պէտք է որ մի աւելի զօրեղ, մի պատմա-

կան պատճառ ունենայ, և այդ այն է, որ հրէայ ազգի եղել է աւետարանի անմիջական թշնամին: Երկար տարիների ընթացքում եղած անընդհատ հալածումներն ունեցան այն նշանակքը, որ հրէայ ժողովուրդը բոլորովին այլասեւեղեց, թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս: Ձրկված քաղաքացիական իրաւունքներից, նա չէր կարող հող տիրապետել, ու երկրագործի արդար աշխատանքի պտուղը վաշելէլ. արհեստներով նոյնպէս չէր կարող պարագել, որովհետեւ զրան հակառակ էր միջնադարեան համընթացական (Иехъ) ոգին, և քրիստոնեայ համընթացական հազիւ թէ համբերէին իրանց մօտ մի հրէական համընթաց, քանի որ այդ ընկերակցութիւնները ոչ թէ միայն հասարակ ընկերութեան, այլ մի կրօնական ընկերութեան ոգով էին կազմված: Ուրեմն այսպէս անկարող լինելով իր ֆիզիկական ոյժերին ապաւինել, նա եղաւ ֆիզիկապէս թոյլ, իսկ իր հալածիչներից արդարութիւն չը գտնելով, նա եղաւ բարոյապէս վախկոտ և խաբար: Ամեն բոլոր սպասելով քրիստոնեայից կողոպտուած լինել, նա ստիպված էր այնպիսի գործով պարագել, որով կարող կը լինէր իր հարստութիւնը թաղցնել, որպէս զի քրիստոնեայի նախանձը չը չարժէ, և այդ գործը նա գտաւ վաշխառութեան մէջ: Բացի այդ, վաշխառութիւնն ունէր նաև այն օգուտը, որ հրէան կարող լինելով չուայ բարձունքին, որոնք միշտ փողի կարտութիւն ունէին, պատրաստ փողով օգնել, գտնում էր նրանց կողմից ոչ միայն պաշտպանութիւն հալածող ժողովուրդի դէմ, այլ և իրաւունք նրա վրա: Ուրեմն եթէ հրէան կամենում էր քրիստոնեային հաւատար իրաւունքներով ապրել, նա պէտք է ոչ թէ աշխատանք լինէր, այլ պատրաստ փող ունենար, և զարմանալի չէ որ մինչև այսօր կապիտալը հրէայի գոյութեան գլխաւոր պայմանն է եղել: Բայց այդ բաղդին կարողանում էին տիրանալ ի հարկէ, ոչ բոլորը. մեծամասնութիւնը պարագած էր այնպիսի գործերով, որոնց քրիստոնեան արհամարհում էր, աւելի օգտաւեր գործեր ունենալով, այն է մանրավաճառութիւնը և հնազանդութիւնը, արհեստներ, որոնք մինչև այսօր մնացել են հրէային սեփական: Մի բան անհուր կապված է հարստութեան հետ, թէ հրէան քրիստոնեային ճշնոյն է համարվում, սակայն այն աղքատ ու ողորմելի դասակարգը, որը կազմում է հրէայ ժողովրդի մեծամասնութիւնը, չունի ոչ մի քրիստոնեայ ժողովուրդ: Այս համար հարկաւոր չեն ստատիստիկական ապացոյցները, ու երկը է այն քաղաքներում, ուր բնակվում են հրէաներ, նա անշուշտ նկատած կը լինի այս իրողութիւնը: Գուցէ ոչ մի երկրում ատելութիւնը դէպի հրէան այն խառնութեանը չէ հասնում, ինչպէս Գերմանիայում, թէ հնչեց այդ Գերմանիային, եթէ ոչ ամբողջ Եւրօպային հրէաները մեծամեծ ծառայութիւններ են մատուցել պատմութեան մէջ: Անտիսեմիտ-հակահրէական բազմ գերմանացու համար նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ աղգաւոր կամ հայրենասէր, և այդ տիտղոսը կրում են սիրով ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլ և շատ նշանավոր մարդիկ, գիտնականներ և բոլորին առաջնորդող աւետարանի քարոզիչները: Ամեն օր կարգադրվում են լրագրիւններով, քաղաքի յայտարարութիւններով սրտերի վրա հրաւերներ, թէ այսօր այս ինչ զարմնալի անտիսեմիտների ժողովն է. ժողովուրդը հետաքրքրութեամբ վազում է դէպի այն ժողովները, յուսալով սովորել այն միջոցները, որոնցով կարելի կը լինի հրէաների սերունդը աշխարհիս երեսից արեւել: Փողոցներում բրօշուր ծախողները չարքով կանգնած միաձայն գտաւոր, Juden-Bordelle, Juden-Bordelle, և մէկ օրով մէջ անթիւ օրինակներ այսպիսի բրօշուրներ, որոնք ուղղած են հրէաների դէմ, զարմանալի արագութեամբ տարածվում են ժողովուրդի մէջ: Գերմանացի աղգաւորները սովորաբար իրանց հայրենիքի շատ չարիքները հրէաներին են վերագրում. օրինակ հրէաները համարվում են պրօստիտուցիայի տարածող, բայց զարմանալին այն է, որ, ինչպէս յայտնի է, գերմանական պրօստիտուցիայի անթիւ զօրքերի մէջ հրէաներն հազուադիւրէն է:

Տ. Մ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալմատ, 2 նոյեմբերի
Մի որ և իցէ իրաւացի բողոքի դէմ յանդիմանութիւն ու լուտանքներ լսել այնպիսի դասակարգի մարդկանցից, որոնք իրանց առողջադատ և բանխմայ են ձեռնարկում ամբողջ ժողովրդի մէջ, դա, մեր կարծիքով, ամենին անհերքելի է և անվաշել անխնայութիւն: Վարկերի կենդանի փիղն անգամ ոչ ոքի կապիտալիստի տիրաւարար չէ խոնարհվում, երբ նրանք տմարդաբար նրա անմեղ զինի վրա կոկոսի ընկուղներ են կոտորել ուղղում, բայց օրէնքով շատ սուր մուրճերի հարուածներ սիրով է տանում: Ատրպատականի առաջնորդ հանգուցեալ Ս. Ե. պիտակոպոս Միտիմարեան 87 թւի վերջերում Սալմատ մուտք գործելով տուեց իր անդրանիկ ապացութիւններ տեղիս հայ ժողովրդին, որից նա արքայալայել մեծ ընդունելութիւն ստացաւ: Նորին սրբազնութիւնը, ժողովրդի ցոյց տուած այդ չափազանց սիրալի ընդունելութիւնից պարտաւորված՝ մտքում յղացաւ մի բարենպաստ կրօն, այն է՝ տեղական կրօնը զորոյցներով վիճակը բարեկարգել և այդ բարի նպատակով իրաւունքներ համար, նա մի քանի եկեղեցիներ և առձեռն գտնված պատրաստի դրամներ վերցրեց, որպէս զի այդ գումարները յատկացնելով որ և է մի ապահով տեղ, զարոյցներ համար բարեկարգող ապագայ պատրաստէ: Անցան 4—5 ամբողջ տարիներ. սպմատցիներ ից ոչ ոք չը համարձակվեց սրբազանին այդ գումարների համար հարց առաջարկել, թէ արդեօք իրանց եկեղեցիների սեփականութիւնը ինչ եղաւ, կամ ու՞ր յանձնվեց: Ինչու: Որովհետեւ աղգաւոր հանգուցեալ իր ստանձնած հոգեւոր պաշտօնի մէջ մի այնպիսի սուր ընթացք էր բռնել, որ մինչև անգամ շատ հիւսաւորներ և պարսից դատարաններ անհաճում էին նրանից, ուրեմն ուր կը մնար, որ գոհնիկ գիւղացին մի այդպիսի տարօրինակ ինքնավարութեան դէմ հարց առաջարկէ: Սալմատցիների յիշեալ գումարը 950 թումանի է հասնում հետեւեալ բաժանմունքով՝ 350 թուման փայտիկ գիւղին, 350 Հաֆթլուանին և 250 Սուրային: Սրանից մի քանի շաբաթ առաջ փայտիկ գիւղի ժողովուրդը իրանց մէջ մի ժողով կազմելով, ուղղում էին գիւղական մի քանի ապօրինի գործերին վերջ դնել, և ի միջի այլոց յիշեալ 350 թումանի համար առաւելայ լացվեց. նրանք միաբնան սկսեցին բղաւել իրանց գիւղի ներկայացուցչի վրա ստելով՝ «պարոն, մեր եկեղեցու փողերը, որոնք մեր չարքաւ աշխատանքի հաւալ վաստակն էին, ուր որ հարկն է բողոքի և ձեռք բեր, եթէ ոչ...» սպասում էին նրանք: Մենք այդ ժամանակ, ամբողջ սպառնական չարաւորիքներից և մանաւանդ խոջի զգացմունքներից զրկված, երկու նամակ գրեցինք թաւրիկ ում որ հարկն էր, յուսալով որ ժողովրդի գանգաւորներին զիջանելով, հանգուցեալ թողնուած համեստ գումարից կը բաւականացնեն և կամ գոհացուցիչ պատասխան կը տան մեզ: Բայց, ընդհակառակ, նրանք գրաւոր պատասխանեցին մեզ հետեւեալ անվաշել նախադասութիւններով. «պ, բարեհաճեցէ՛ք ձեր որոշեալ սահմանում մնալ, ստանց յափշտակվելու որ և է դադափարից...» Ձեր դատողութիւններ և առաջարկութիւններն ես յարաբերական ձեռնիդ ձեր սահմանից դուրս է և ներքի չէ...» և այլ անհեթեթ թեթեւութեամբ: Ուրեմն այդ պարտաների առողջ գատողութեամբ 200 տուն գիւղացի ժողովրդի ներկայացուցչից գիւղացիներից կօպէկ-կօպէկ ձեռք բերած, իսկ այս րօպէիս կրօն փողերի համար բողոքելու իրաւունք չունի. եթէ յանդիման բողոքել, ինչ իր ստանձնած պաշտօնի սահմանից դուրս է և չէ ներքի: Պնդում ենք չեղանելով, որ աղգային կրօն մի կօպէկի համար իրաւունք ունի պահանջ առնել ամենայնպէս մի թշուառ հայ, եթէ նրա սրտի մէջ դարգացած են աղգային ջիւղ զգացմունքներ: Ուրեմն ուր կը մնայ մի պատմական նշանաւոր գիւղի ներկայացուցչի, որին ամբողջ ժողովուրդը ստիպում է, որ իրանց գաւառ քրտնքով չահած փողերը պահանջվեն: Այստեղ ինքն ըստ ինքեան առաջադրող մի կարեւոր հարց կայ առաջարկելու, որին համարաշխարհում պատասխանել թոյնում եմ «Վշակի»:

յարգելի ընթերցողներին. արդեւ իրաւունք է, որ մի եկեղեցի և մի դպրոց, որոնք թէ նիւթապէս և թէ բարոյապէս բոլորովին կորած են, որ նրանց սեփականութիւնը՝ ունակութիւն լինի:

— Ի հարկէ, մէկ կը պատահարէ ընթերցողը: Ապա ուրեմն ամեն լուսանքներ մի կողմ առնելով և աղքատին անհրաժեշտ պահանջները աչքի առաջ ունենալով, հրապարակով պահանջելու ենք մեր աղքատիկ դպրոցի և եկեղեցու սեփականութիւնն եզոյց մասնաւոր գումարը այն պարտնեցից, որոնք այսօր ինքնավստահաբար իրաւունք են բանեցնում հանգուցեալ Մխիթարեանի պատկաւելի գումարի վրա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԳՈՒԳ, 18 նոյեմբերի: «Гражданин» լրագիրը հաղորդում է, որ զինգամտեսական միջոցներով գնորդ ընկնելու հարցին վերաբերեալ յանձնաժողովի նախագահ Պելլիի զեկուցումը կը ծառայի իբրև գլխաւոր հիմք՝ հինգ միլիոնների խորհրդակցութեան համար պետական կալուածներին միմիատրութիւնը երկրագործութեան միմիատրութիւնը դարձնելու:

ՊԱՐԻՑ, 18 նոյեմբերի: Լեւոնի որդին, Կոստիւս և Մարիւս Ֆոնտան, Պանամայի ընկերութեան կառավարիչները հրաժարուցին ներկայանալ քննիչ յանձնաժողովին: Ընդհանուր դատախազը հրաժարում է հաղորդել քննիչ յանձնաժողովին Պանամայի գործի վերաբերեալ դեկլարացիաները, այդ տեսակ հաղորդագրութիւնը հակասում է դատաստանական կարգերին:

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբերի: Մեծ իշխան վարդապետ Ալեքսանդրովիչ ամուսնու հետ հասաւ Պոտսդամ: Ի պատիւ դրանց Պոտսդամի պալատում տեղի ունեցաւ ճաշկերպութիւն, որին ի միջի այլոց, ներկայ էին պրինց Լէօպոլդ պրուսացին, ամուսնու հետ, դուքս Յոլշտայն-Սլրբիտը Մեկլենբուրգեան ամուսնու հետ, Բուսաց դեսպանը, կանցլեր Կապրիլի և գեներալ Վերդեր:

ՊԵՏԵՐԳՈՒԳ, 19 նոյեմբերի: Հոկտեմբերի 29-ին, Ալեքսանի կալիկոպոս օծեց ուղղափառ եկեղեցին, որը թուով առաջինն է Չիկագոյում, և երրորդը՝ Հիւսթայնի Ամերիկայում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 19 նոյեմբերի: Ենթադրում է արգելել Ամերիկա գաղթելը՝ մինչև մի տարի:

ՊԱՐԻՑ, 19 նոյեմբերի: Միայն երեկ առաւօտվանից Բրիտանիայի սկսեց աշխատել նոր միմիատրութիւն կառուցող համար: Լրագիրները հաղորդում են, որ նա կաշխատի ձեռք բերել մի քանի միմիատրութիւններ, որոնք նոր հրաժարական տուեցին, զինաւորապէս իրենց և Ֆրէյսինէի: Մի քանի լրագիրներ ենթադրում են, որ ապահովելով միմիատրութեան կազմակերպելը,

Բրիտանիայի հեռանայ ապարհեղից և կառավարիչ Բուրքոլային՝ իբրև միմիատրական խորհրդի նախագահ:

ԲԵՐԼԻՆ, 19 նոյեմբերի: Մեծ իշխան վարդապետ Ալեքսանդրովիչ ամուսնու հետ երեկ առաւօտեան այցելութիւններ արեցին Պոտսդամում, ապա նախաճաշեցին դուքս Յոլշտայն Սլրբիտ Մեկլենբուրգ Շլեյքինի մօտ. երեկոյեան 7 ժամին կայսրուհու մօտ մեծ ճաշկերպութիւն կար, որին ներկայ էին 30 հրաւիրվածներ: Երեկոյեան 11 ժամին Նոյա Բարձրութիւնները ճանապարհ ընկան Պետերբուրգ: Կոմս Կապրիլի ասաց թէ իրատաճում, որ ինքը, ինչպէս մի տարի առաջ, այնպէս և այժմ համոզված է, որ Գերմանիայի զինուորական ոյժը բաւականաչափ կերպով չէ գործադրում: Կանցլերի խօսքով, զինուորական ծառայութեան կանչել հասակաւոր մարդկանց, քանի որ 60,000 երիտասարդ և ծառայութեան ընդունակ մարդիկ չեն կանգնում ծառայելու, կը նշանակի սխալ գործել՝ զինուորական, տնտեսական և ֆինանսական տեսակետից: «Ենք ուղում ենք, աւելացրեց կոմս Կապրիլի, ուժեղացնել, երիտասարդացնել և լաւացնել զօրքը»:

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐՈՒԿԱՍՏԵԱՆ ԵՎԱՍՏԱՆԻՆ

Ճանապարհորդական գնացքը № 2 ԹԻՖԼԻՍԻՑ գնացի ԲԱՌՈՒՄ մեկնում է 9 ժամին 30 րոպէին առաւօտեան և հասնում է Թիֆլիս 9 ժ. 45 ր. երեկոյեան:

Պոտսդամի գնացքը № 3 ԹԻՖԼԻՍԻՑ գնացի ԲԱՌՈՒՄ մեկնում է 1 ժ. 20 ր. ցերեկով:

Պոտսդամի գնացքը № 4 ԹԻՖԼԻՍԻՑ գնացի ԲԱՌՈՒՄ մեկնում է 6 ժ. 50 ր. երեկոյեան և հասնում է ԲԱՌՈՒՄ 8 ժ. 15 ր. առաւօտեան:

Ճանապարհորդական գնացքը № 1 ԲԱՌՈՒՄԻՑ գնացի ԹԻՖԼԻՍ մեկնում է 9 ժ. 45 ր. առաւօտեան և հասնում է Թիֆլիս 9 ժ. 52 ր. երեկոյեան:

Պոտսդամի գնացքը № 3 ԲԱՌՈՒՄԻՑ գնացի ԹԻՖԼԻՍ մեկնում է 11 ժ. 25 ր. զիշերով:

Պոտսդամի գնացքը № 4 ԲԱՌՈՒՄԻՑ գնացի ԹԻՖԼԻՍ մեկնում է 11 ժ. 10 ր. զիշերով և հասնում է Թիֆլիս 5 ժ. 50 ր. կէսօրից յետոյ:

ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՌՈՒՍՍԵՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՐԱԹ զիշերով 2 ժամին, Բաթումից գնացի Օդէսա չորական ընթացով, բոլոր նաւահանգիստների վրայով:

ՉՈՐԱԿՇԱՐԹԻ Բաթումից գնացի Օդէսա, 11 1/2 ժամին զիշերով արագ ընթացով, Սեւաստոպոլի վրայով:

ՀԻՆԳՇԱՐԹԻ, Բաթումից գնացի Օդէսա, 4 ժամին կէսօրից յետոյ, Նովորոսիսկի և Կերչի վրայով, ԵՎԿՈՒՇԱՐԹԻ երեկոյեան հասնում է Բաթում չորական ընթացով Օդէսայից եկող չորեքուր:

ԵՐԵՎԱՆԻՑԻ առաւօտեան հասնում է Բաթում Սեւաստոպոլի վրայով եկող չորեքուր:

ՈՐԲԱԹ առաւօտեան հասնում է Բաթում Կերչի և Նովորոսիսկի վրայով եկող չորեքուր:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍՏԱՆՈՒԹՅՈՒՆԻ Հրամանի համաձայն արանով հրաւիրում են ՀԱՄԱՐՈՒՆԵՑՈՒՆՈՒՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՎԵԳԵՆԻՆ մեծապատիւ ծխական ժողովուրդներին շնորհ բերել առաջիկայ ԿԻՐԱԿԻ, նոյեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, յիշեալ եկեղեցին կատարելու նոյն եկեղեցու նոր երեցի օրհնանի ընտրութիւնը: Վերաւստեւ բարեկարգութեան եկեղեցեաց հայոց Հաւաքարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց:

(№ 133)

2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍՍԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԳՕՆԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ: Հինգշաբթի, 26 նոյեմբերի (8 դեկտեմբերի), դուրս կը գնայ ԲԱՌՈՒՄԻՑ GUADALQUIVIR (ԳՈՒՆԱԿԱԿԻՎԻՐ) նաւը, նաւապետ VANNIER (ՎԱՆՆԻԵ) գնացի Կ. Պոլիս, Մարսէլ, Հաւր, Լոնդոն, մոսկով և միջանկեալ նաւահանգիստները:

Ագէնաները ԲԱՌՈՒՄԻՍՏ՝ ՄԱԼԱՎԱՅԻ, ԹԻՖԼԻՍԻՍՏ՝ ՀԵՃՈՒԲԵԱՆՑ, Իսկ ԲԱՌՈՒՄԻՍՏ՝ մէջ՝ ԳՕԼԿԱԼՈՒՍ:

(№ 23)

2—2

Պատիւ ունենք յայտնելու Կովկասի պ.պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ մենք գտնվելով մշտապէս վարչապետութեան մեր սեփական գործերի պատճառով, ընդունում և կատարում ենք նաև ուրիշների համար ամեն տեսակ թէ ԱՌՆԵԼՈՒ և թէ ԾԱԽԵԼՈՒ վերաբերեալ յանձնարարութիւններ:

Եղբարք Ե Ա Ր Ղ Ո Ւ Լ Ե Ա Ն Ց Ն Ե Ր

Մեր հասցեն. Варшава, Пережиде, д. № 9

№ 117 9—15

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ր Գ Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն Ո Ւ Մ

Երկուշաբթի, նոյեմբերի 23-ին, հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ

Ի Ն Պ Ա Ս Տ
Պ. Ա Ր Ո Ւ Ն Ա Մ Ե Ա Ն Ի

Շ Ե Յ Լ Օ Կ

կ ա մ

Վ Ե Ն Ե Տ Ի Կ Ի Վ Ե Ճ Ե Ռ Ե Կ Ա Ն

Կամեդիա 6 պատկերով, հեղ. Շեքսպիրի, թարգմ. Թարխանեանի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

№ 134

Սկիզբն է ժամի 7 1/2 երեկոյեան: Տեղերի գները սովորական են:

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ արանով յայտնում է

է ընդհանուր գիտութեան, որ դեկտեմբերի 11-ին, ներկայ 1892 թվին, ժամը 12-ին (կէսօրին), Ուղարկւելի ատենանում, նշանակված է աճուրդ՝ կապալով տարու Ալեքսանդրեան պալատում գտնվող պալիլիօնը (բուրժուա), որը այժմ կապալով վերցրած ունի Յակոբով միմիատրական ջրերը, կաթը, կուսիսը և քեֆիրը ծախելու համար, ԵՐԵՎԱՆԻ տարի ժամանակով, այն է յունվարի 1-ից 1893 թվին, մինչև յունվարի մէկը 1896 թվին: Պայմանների հետ կարելի է ծանոթանալ Ուղարկւելի ատենանում ամեն օր, առաւօտեան 10 ժամից, մինչև 1 ժամ կէսօրից յետոյ:

1—3 (2)

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԱԿԱՆ ԱՏԵՆԻ կարգադրութեամբ և հանգուցեալ բարերարուհի Սօֆիա Կիրիակովայի կապի համաձայն որոշված է վաղը, ամիս 22-ին, կիրակի օր, ժամը 12-ին, սուրբ պատարագից յետոյ, կատարել Աւետեաց (ՋԻՐԱՇԵՆԻ) եկեղեցու երկուսու պարոնների հոգաբարձութեան երեք անդամների ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները նշանակված օրը հրաւիրվում են նոյն եկեղեցին մասնակցելու ընտրութեան: Ժամանակներին իրաւունք չէ տրվում ընտրել և ընտրվել:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչ՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց:

1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է արանով որ դեկտեմբերի 10-ին, ներկայ 1892 թվին, ժամը 12-ին (կէսօրին) Ուղարկւելի ատենանում, նշանակված է աճուրդ՝ կապալով տարու քաղաքային հողը Կուկիայում, բաղադրած 888 դեսետին և 1800 քաւակուսի սաժէն արտատեղերից, խոտի արտերից և վարելահողերից, ԵՐԵՎԱՆԻ տարի ժամանակով, յունվարի 1-ից 1893 թվին մինչև յունվարի 1-ը 1896 թվին: Կանգիցիաները կարելի է կարդալ Ուղարկւելի գրասենակում ամեն օր, առաւօտեան 10 ժամից, մինչև 1 ժամ կէսօրից յետոյ:

1—3 (2)

Միայն ֆարմակային ապրանքներ կը խափարդուին և համալրուին:

Սեղիկը և խոտերից պատրաստված մաղց-կաւաքի և կոնֆետների

Լ. Գ. ՊԵՏԵՐԳՈՒՄԻ ՄԻՃ:

Վերականգնողական և բժշկական փորձելով ապացուցված է, որ այդ պրոպիւրաները չեն պարտաւորում աւտոբուրժուան հասարակութիւնը և փնտաւոր բազմաթիւ հոգեւոր և արտաքին ապրանքները, որոնք ինքնին և այդ պատճառով նրանց ներքինում Բուստանի և նրանց անցկող ծախելը թողնուցված է:

ԳԻՆՈՒՄ, չիշ 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կոնֆետները 80—50 կոպ:

Գլխաւոր պահեստ Բուստանում

Վ. ԱՌԻՍԻԼԻՍ

ՊԵՏԵՐԳՈՒՄԻՍՏ, Կոլոբոյայա 18/19

Վաճառվում է Բուստանի բոլոր դերաւորդարաններում և դերաւորդարանում

(91—№ 127) 5—12 (10, 20, 30)

ՉՈՒԻ ՍԱՊՈՆՆ

ЯНЧНОЕ КУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ МЫЛО. ВЬСОВОЕ ЯНЧНОЕ МЫЛО.

Ա. ՄԻՈՒՆԵՆԸՆԿ

12—52 (2) № 86

Լոյս տեսաւ և վաճառվում է Կենտրոնական գրաւաճառանոցում Շիրակեցու «ԵՐԿՈՒՆԵՂԱՅՐ» վերնագրով զիշը (Պատկեր իրական կիսերից) զինն է 8 կոպէի:

(№ 133) 2—2

ՄԻ ՕՐԻՈՐԴ

Օրը ձեռագործի արհեստ ուսած է Կ. Պոլսի ֆրանսիական ուսումնարանում, պատրաստում է տան զարդեր նոր տարազի համեմատ՝ ԲԱՐՁՆԵՐ, ՄՈՒԹԱՔԱՆԵՐ, ՍԵՂԱՆԻ ԾԱԾԿՈՑ և այլն, զանազան տեսակ կարված, օսկեկերով, հաւուցով, մետաքսով և բարձրակարգ կանվա, նաև սպիտակիզէի վրա մաքուր նշանագրեր:

Հասցեն Թիֆլիս, Թոմինայա օւլիցա, Դ. Անտոնովա, № 18.

(№ 141) 3—5